

Նաչառ Զրիստոսի ատենին¹ չլռէ, այլ անշէջ բոցոյն մատնէ: 93 Եւ անուանէին բարեկամս ինձ եղբարսդ սրբոյ զգին գրուանին² զքո տեառն եղբարորդւոյ³: 94 Եւ ունին երեքեան արթոյ զամենայն⁴ սննդեան եւ խրատու մասն եւ զհրահանգ հոգեպէս եւ մարմնապէս, ⁵եւ զծանաւթութիւնս ուղղափառ հաւատոյ՝ 6յարհնելոյ ի մաւրէն քումմէ⁷ եւ ի քէն ի տեառնէ: 95 Եւ են արթ ոչ թերակատարք ինչ հասակաւ եւ կամ տիւեղծք⁸, այլ յամենայն մտաւորութիւնս եւ յիրս արիւրեան լիք եւ կատարեալք: 96 Ընդ Նոսին եւ զԱբեղենից տէր, որ եւ Նա ի քո տեառն սիրոյն եւ յամենընկալ բարերարութենէդ ունի զամենայն յարգանաց իւրոց եւ լինելոյ ի միջի զպատճառ, եւ առ ի Տեառնէ. եւ են ի Զրիստոսի շնորհէն ամենեքեան ողջ եւ միջի: 97 Յարցցին ըստ մարմնոյ զհայրութեան իմոյ խրատս եւ զըստ հոգւոյ զվարդապետութեան իմոյ զբան, եւ զոր ինչ լուեալ է յինէն⁹՝ չունելով պարտաւորութիւն¹⁰ յոգիս իւրեանց՝ ասասցեն անսուտ:

98 Բայց սիրէին երեքեան¹¹ եղբարքն զվանսն սրբոյ Կաթողիկէի՝ պտղովք եւ ամենայն պիտոյիւք. որոց իւրաքանչիւր ուրուք տուրն յայտնի էր, եւ գրով մնաց ի տեղւոջն. որք արդարեւ քո տեառն¹² կամացդ դոքա երեւեցան կամակատարք: 99 Վասն զի յաւրէ, յորմէ հետէ դու, տէր, ըստ քո անարգամեծար ինամոցդ յանձնեցեր զիս քո ընտանեաց՝ դոքա երեւեցան յիս հրամանակատարք բանի քում, ուրոյն ըստ կամի զպտղատրութիւն¹³ տեղւոյն հատուցանելով, եւ ուրոյն զիմ պէտս եւ զկարաւորութիւն¹⁴ հոգալով. այլ եւ զբանս իմ յոյժ ախորժիւք եւ պատուականութեամբ ընդունէին, որպէս եւ զառողջ վարդապետի, եւ պատուէին որպէս եւ զհայր. եւ մանաւանդ առաւել տէր Յամագասպ, որում *տացէ Տէր ողորմութիւն, որպէս եւ տանն Ոսեսիփո-*

1 SS. չիք ատենին

2 Զ. դրուանին

3 ԲԳտ. Եղբորորդով-ից յետոյ ունի ծնթ. «Խառնակ եւ սխալ կայ ի բանիդ. թերեւս զգին պարտ իցէ ընթեռնուլ զերեսին եւ եղբորորդիս զԵղբորորդւով»:

Թերեւս ուղղելի է եւ անուանէին բարեկամս ինձ՝ զեղբարսդ զԵրկուսին, հանդերձ քո տեառն եղբորորդւով». զքո-ի զ-ն ղնելով եղբարսդ-ի վրայ. սրբոյ զգին-ը զերկուսին, եւ դրուանին կամ գրուանին-ը հանդերձ կարդալով:

4 SS. երեքեանքդ զամ...

5 Զ. եւ զծանօթութ (պատուով) ուղափառ... օրհնելոյ ի մօրէն քումմէ եւ ի քէն տեռնէ

6 Ատ. օրհնելոյ... քումմէ

7 Գտ. քումմէ

8 ԶԱտ. տիւեղծք

9 SS. լուեալ է քո յինէն

10 Զ. պարտաւորութիւն

11 ԲԳտ. երեքին

12 Գտ. ոք Տեառն

13 SS. զպտղաբերութիւն

14 ԲԳտ. զկարօտութիւնս